

ԶՈՆԱԶԱՆ ԼՈՒՐԵՐ

ՆԻՔԻՆԵՐ ՄՈՒՐՃԻ ՊԱՐՏՔԵՐԸ ՀԱՆԳՑՆԵԼՈՒ համար ՍՊԱԳԱՆՔ ԲԱՔՎԻՇ
ՄԻԼԻՆ Ս. Ա-ից (պրմ. Յակոբ Տէր-Դէսթեանի, Ճեռքով) 15 ռուբլի։
Այդ նպատակով ցարդ սուացւած գումարը կազմում է 1.743 ռ. 50 կ.
ՊԲՆ. Գ. ՄԵԼԻՔ-ԿԱՐԱԳԵՂՅՈԶԵԱՆԻ «Գերմանական օգնութիւնը Տաճկա-
Հակերին» տուածի սկիզբը, որ տպւեց անցեալ տարւայ վերջին Նօ-ում,
արտարպութեամբ Դրկում է Մուրճի աւտ տարւալ նոր բաժանորդ-
ներին։

ՄՈՒՐՃ'ԻՑ Ա.Բ.Ա.ՑՊԱԾ Հրատարակութիւնների թիւը, ինչպէս ընթերցալը
կ'ուենի լայտարարութիւնների մէջ տպած ցուցակից, անցնում է
արդէն 50-ը և կազմում 51 գիրք։ Ա.Է.Ք.Քան գիրք արտարպած է
Մուրճ'ից 11 տարում. տարւայ վրայ ուրեմն, ընկնում է $4\frac{1}{2}$ -ից
աւելի. Այդ 51 գրքերի գները կազմում են 21 ռ. 31 կոպ.։ Ընդհա-
նուր թիւց 35-ը գեղեցիկ գրականութիւնից են, 16-ը գրականու-
թեան այլ ճիւլերից (բնագիտական, ճամբորդական, կենսագրական
և ալլ), Բուրոր 51 գրքերի օրինակների թիւը կազմում է 33.100։—
51 գրքերից Մուրճ'ից արտարպած են խմբագրութեան հաշով։
47-ը (որոնց գների գումարն է 19 ռ. 20 կ.), ճեղինակների հաշով
4-ը (որոնց գների գումարն 2 ռ. 10 կոպէկ)։

Ա.Է. 51 գրքերի տպագրութիւնը, մօգաւորական հաշով, նստել
է 7.000 ռուբլի, որից 6.000 ռուբլի Մուրճ'ի խմբագրութեան հաշով։
ՇՈՐՈՎԸ 04-ՆՈՒԹԻՒՆԸ ԱԽԱԼՔԱԼԱԿԻ արկածեալներին, Անցեալ անգամ
ծանուցինք որ Մուրճ'ի խմբագրագումը ընդունած շորեղիններից 5
հակ (246 կտոր) դրկեց Ախալքալակի քաղաքագլխին դեկտ. 27-ին։
Ունէինք մօտնեց ևս 213 կտոր և դրամով 51 ռ.։ Ա.Է. իրեղինները
և դրամները սրացած էինք 43 անձից, Դորանից դէս սրացել ենք՝
թէոյրոս Սարգսեան Հախնազարեանից 5 ռ., 45-րդ՝ Նիշան թա-
թիկեանից 1 ռ., 46-րդ՝ Տիկ. Շահմուրադեանից 17 կտոր շորեղին,
47-րդ՝ Տիկ. Հռիփսիմէ Մեացականեանցից 53 կտոր շորեղին, Ըն-
դամենը սրացած ենք 529 կտոր շոր և 57 ռ., Մեզ մօգ գրանւածներից
Դրկեցինք ևս 6 հակ (213 կտոր) Ախալքալակի քաղաքագլխին, Արդ։

Բարակշեանի զրառենեակի միջոցով (ըստ հաշվի 10-ից լուսւարի 1900 թ. № 9)։

ԱԱՑՍԵՐԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆ

—Երկրագ. և պետ. հողերի մինիստրի օգնական նշանակւած է Ա. Յ. Սովուչն, որը Նորին Մեծութեան կարինէտի հոշաբն-գործարանական բաժանմունքի կառավարին էր Նա լայտնի գործիչ է եղած Ո իմֆերուպովի նահանգի և գաւառի գեմարտներում։

—Պետական կոնդրուեոր Տ. Ի. Փիլիպպովի մահան հերթեանքով՝ պետ. կոնդրուեոր նշանակւած է պետ. խորհրդի անդամ Պաւել Լուժիչ Նորիս Վերջինս սոտացել է զինուրական կրթութիւն, երկար տարիներ եղած է պրոֆէսոր զինուրական վարչութեան զիոնութիւնների. ի միջի ալլոց նա զինուրական վարչութեան դասադրու է եւել լազարու-լազար Նիկոլալ Ա-ին թագաժառանդ եղած ժամանակ։

ՀԱՅՈՑ ԳՎՐՈՑՆԵՐ. Թիֆլիսի Յովեանեան-Մարիամեան օրիորդաց Դըպրոցը, որ հաւասար միւս ծխական դպրոցների փակւեց 1896 թւին, վերաբացւելու է նորերո հաստարուած առանձին կանոնադրութեամբ, Մանրամասնութիւնները դեռ լայտնի չեն, բայց միայն ակադեմ լայտնի է մեզ, որ դպրոցի տեսչի պաշտօնի համար հոգաբարձութիւնը դեռ անցեալ աշնան հրաւիրել էր Գէորգեան ճեմարանի ուսուցիչներից պ. Յովհաննիս Յովհաննիսին, որ և ընդունել էր առաջարկը։

ՆՈՐ-ԲԱՑԱՌԵՔԻ ԳԱԱԱՌԻ 20 գիւղերին, որոնք վագ հունձ էին ունեցած, երկրիս բարձր կառավարութիւնը գնուել է տալ այդ գիւղերի շրեմարանական գումարները 4.393 ռ. 70 կ. և խնդրւած է ներբին գործ. մինիստրութիւնից հոցա տալ պետական փոխարքութիւն 518 ռ. 80 կ.։

ՇՈՒԽԱՑ ԳԱՐԹԱԼԱՆ ԳՈՐԾԸ. Մայրաքաղաքի թերթերը հաշորդում են որ Ներկաւ 1900 թ. Հիւս. Կովկասում և Անդրկովկասում զործելու են պաշտօնեաների խմբեր ոռու զալթական զիւղեր կազմելու համար Պաշտօնեաների մէջ լինելու հն աշափներ և ամրուշ զործին շեկավարող անձեր Խմբերի համար վարձատրութիւն 1900 թ. համար նշանակւած է 50 հազար ոռորդի, 1901-ին զումարը առելի է լինելու. Պաշտօնեաների ստանալու հն հողաբաժններ

Վարոնեցի հանանգից 15 ընդունիք նորերո անցան Վայիկ կազով մեր երկրում հաստագուելու համար. մեզ դեռ ևս լայտնի չէ թէ ուր պիտի հաստարւին։

ԳՐԱՄՐԱԿԱՆ ԿՐԻԶԻՍԸ. Բարձրագուն համաձայնութեամբ փինանսական մինիստրը պետական բանկի կանոնադրութիւնից շեղելով թուլարեց

(19 նոյ. 1899) որ պետք բանկը վոխառութիւն դայ և վարկ բաց անի բոլորովին հասրադ բաց ոչ երաշխաւորւած որկոսաքեր իւլյան դիմաց, բաց միայն աքցիաների արժեքի 60% և օրլիգացիաների 75%:

ԺԱՆՏԱԽԾԱՅԱՍԻ ՆԱՀԱՆԳՈՒՄ: Հակառանութախորի բանձնաժողովը, նոյ. 2-ին 1899 իւր անդամների մեծամասնութեամբ եկաւան եղակացութիւնն, թէ Ասորախ, նահանջի Կոլոբովիա զիւռում եղած սուր-վարակիչ հիւանդութիւնը անկառկած ժանդախոր էր, իսկ փոքրամասնութիւնը այն կարծիքն էր չարուել թէ այն հիւանդութիւնը շատ նման է ժանդախորին պնեւմնիական ձեռով:

ՆԻԿԻՆԵՐ ԵՒ ԿՏԱԿՆԵՐ.

Ալրի Ժողեթինա Լալայեան (դուսոր Սրեփանոս Նաղարեանցի) նւիրեց 4000 ոռուբի, որպէս զի գումարը վարկաչին հասրադութիւններից մինում շահացնելով՝ կազմւի հարկաւոր գումարը, որի տոկոսի քով իւր հանգուցեալ ամուսին Յակոբի անւան մի մահճակալ աւելցը թիֆլիսի Միքայէլեան հիւանդանոցի խելագարների բաժանմունքի մէջ:

ՔԱՂԱՔԱՅԻՆ ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹԻՒՆ:

Գաճճակ, Շուշի և Նուբի քաղաքներում, ուր այդ քաղաքների օդորին նոցա հրապարակներում կանգնուլ սալերի, արբաների, անառուների բեռներից տուրք էր վերցում, երկրիս բարձր իշխանութեան հրահանգի համաձանց՝ այդ տուրքը այլ ևս ժողովելու չի:

Նոյնը տուրքը նաև այլ քաղաքներում (նաև Թիֆլիսում) միացում է:

ԻՒՐԻՑ ՎԵՍԵԼՈՎՍԿՈՒ հաւոց դրականութեանը նուիրած 10-ամեակ բերդը- նաւոր գործունէութեան առթիւ Մոսկվակի մի խումբ հայեր նորապատւին ներկաէ Յունաւրի 22-ին մի համար հանդէս կադարեցին. Կարգադիր լանձնաժողովի անդամներից պ. Ա. Յարնուրեանին մնաք շրկեցինք հետեւալ նորհաւորական հեռագիրը.

«Տօրախմբւուլ իւրի Վեսելովսկուն ջերմագին մաշթում ենք երկար տարիներ գործունէութիւն՝ հաւասար անցեալ դասնամեակին. Յանձնին նորա ռուսաց գրագէտը դառնում է հարազար հայն, որը կարու է պարծենալ այդպիսի բարեխիշն և դաշտանդաւոր ներկալացուցով: Պատրաստ ենք մեր ամսագրի Էջերը ծառակեցնելու սոսորագութեան՝ յարգելի ու հարազար Վեսելովսկու գրւածները հաւոց գրականութեան վերաբերեալ՝ ամբողջական հագորներով հրատարակելու համար»:

Իւրի: Վեսելովսկին մի բացումիկ եցեղթ է ռուսաց գրականութեան մէջ հաւոց գրականութեան վերաբերմամբ: Այդ նոյն դերը

Գերմանացոց համար կապարում է Արթուր Լալսո գերմանացին, ֆրանժիացոց համար՝ Մինաս Զերազ և աշխամ մանաւանդ Արշակ Զօ- պանեան, Ռուսիայում թերես կարելի լինէր լիշել նուն Կիեվի համար- սարանի պրիառագ-դոցնատ Գրէնը, որը իւր ԱՅԻ թւրթի մէջ նաև հաղոց նոր գրականութիւնը իւր ծրագրի մէջ ունի, բաց Վենելով- սկու գործերը ընտիր են, բուն գրագէտի վաստակներ են:

Խրիէ Վենելովսկու ալդ ասպարէզի վրաէ գործունէութիւնը լըր- ջորէն սկսում է 1892 թւականից Ալրուսիսով աշխամ դադարած ամ- սաթերթի մէջ իւր հրափարակած ուսումնասիրութիւնով՝ «Հայոց բեմի պատմութիւնից, Թիֆլսի թափրոնը և վարքագրական կոմե- դիան», Աւելի տարբնի է նորա Մ. Բերբերեանի հետ միասին հրափա- րակած «Հայոց բելլետրիստներ» ժողովածուն, ուր մեր մի շարք լա- ւագոնն նոր հեղինակներից (Արտվեան, Պատկանեան, Պոօչեան, Բաֆիի, Աղաեան, Շահազիդ) թարգմանւած են կարենոր կոտրներ՝ հեղի- նակների կենսագրական բեղեկութիւններով և նոցա երկերի քննա- դափական գնահարումով։ Ապա նա բուել է մի շարք թարգմանու- թիւններ զլաւաւորապէս Պատկանեանի, Շահազիդի, Շափուրեանի ուրանաւորներից, մանր ուսումնասիրութիւններ Ադամեանի, Փեշիք- թաշեանի, հալոց գրականութեան, թատրոնի, հաւ կնոջ վերաբե- րեալ և այլն, կենսագրական լուսածններ Արխմեանի, Միսիթար ար- բալի, Պարսնես նի, Պատկանեանի, Նալբանդեանի, Շապարեանի, Պաօչեանի և Բաֆֆու մասին։ Բացի «Հայ բելլետրիստները և Սուն- դուկեանցի «Պետոյի թարգմանութիւնը, որը (վերջինս) հրափարա- կել է նա Ալ. Ծափուրեանի աշխատակցութեամբ, բոլոր մնացած- ները լուս են դեւել ուսաց օրաթերթերում, ամսագիրներում, «Ել- բարական օգնութիւն» ժողովածուի և Բրոքառուզի «Հանրագիրարակոյի ուսուերէն հրափարակութեան մէջ»։

ԲԲԻԷԼՈՎԻ 100 ԱՄԵԱԿԻ, Անցեալ դեկտ. 12-ին լրացաւ 100-ամեակը կարլ Պաւլովիչ Բրիւլովի ծննդեան Բրիւլովը, վախճանւած 1852-ին, ուսուաց զեղարւեստագէտների մէջ միծերից մէկն է, Բրիւլ- լովի նախանալիքերը ֆրանժիացի էին, որոնք, բոլոքականութեան համար լալածեցան և Գերմանիա գալթեցին. ալդ տեղից 1773-ին քանդակագործ Գէորգ Բրիւլովը, երկու որդիկերանցով զալթեց Խուս- սիս. նորա որդին Պաւել նոյնպէս քանդակագործ էր և ուսուցչա- պետ. Պաւլովի որդին Կարլը դառաւ արդէն հռչակաւոր Ռուսիայում գեղարւեստից ծեմարանը աւարտելուց լիտով՝ նա ո՞սաց Հռոմ, ուր տասը տարի կեցաւ, և մի քանի հիանալի նկարներ ունեց. 1832-ին նա նկարեց իւր նշանաւորագուն գործը՝ «Պոմպէի վերջին օրը» Ռուսիա վերադառնալով նա նշանակւեց պատմական նկարչութեան պրֆեսոր գեղարւեստից ծեմարանում. Նա թաղւեց Հռոմում.

Վ. Բ. Յ. Յ. ԹԱՑԲՈՒՆԻ 50-ԱՄԵԱԿ. Յունիարի 2-ին Ազնականաց թատրոնի սրահներում հանդիսաւոր կերպով կաչացաւ վրաց թատրոնի 50-ամեակի առիթով վրաց դրամարդիկական ընկերութեան լնդէ. ժողովը, նախագահութեամբ իշխանուհի Տ. Գ. Զելոկանւի, կարդացւեց զեկուցումը ընկերութեան գործունէութեան մասին 1882 թւից (Հիմնադրութեան դարւանից) սկսած և կարդացւեց մի պատմական գեղեկարւութիւն վրաց թատրոնի 50-ամեակ զուութեան մասին. Ազառջուններ արտասանեցին ներկալացուցիչները Թիֆլիսի արքունական թատրոնի կողմից, Թիֆլիսի արտիստիկ ընկերութեան, Կայսերական երաժշտ. ընկերութեան Թիֆլիսի ճիշդի կողմից, վրաց գրագիտութիւն տարածող ընկերութեան, Թիֆլիսի քաղաքակին ինքնավարութեան կողմից և ժողովրդական ընթերցումների վրաց բաժանմունքի կողմից. Վերջը ժողովը ընդուց ընկերութեան պատմաւորան դամներ՝ Գաբր. Ն. Սունդուկեանցին և Ա. Յագարելիին,

Լ. Վ. Ելիջկի կաւկազ՝ լրագրի խմբագրութիւնից հեռացնելը Կովկասի կառավարչապետի հրամանով՝ տեղիք է տեղը մալրաքաղաքավին թերթերին գնահատութիւն անել «Կաւկազ»-ի նախկին խմբագրի կառարած դերին. Խնքը պ. Վելիչկօն «Նովոե Վրեմիա» լրագրի մէջ դպագրեց իւր հեռացւելու մասին, իսուրանալով մալրաքա աքում շարունակել ան, ինչ անում էր Ակաւկազի խմբագրի եղած ժամանակի. Նովոե Վրեմիա, Մոսկվակիա, Վէլումոսովի և Գրաժդանին թերթերը իրենց պաշտպանութեան ներքու են առել պ. Վելիչկօնին, մինչդեռ ալ մեծ թերթերը, և դոցա մէջ մանաւանդ Ս. Պետերբուրգուկիա Վէլումոսովին դափն են պ. Վելիչկօնին ան, ինչին նախրօք արժանի է. Այդ վերջին թերթի մէջ լուս գեսածների մէջ մանաւանդ ուշք է դրաւում Գ. Բ. Միրով սորորագրութեամբ յօդւածը, որ մենք այդ թերթից թարգմանելով առաջ ենք բերում Մուրճի ներկաւ Նումա. Զենք կարող ամել թէ այդ յօդւածով պատրասխան տրած լինի ան ամենին, ինչ պ. Վելիչկօն լարուցել է այս վերջին երեք տարինեսում Կովկասիան խնդիրների մասին, և չենք էլ կարող կադարելապէս համաձայն լինել որ հաճերը միմիան և եթ նրանով պիտի գնահատելի լինեն, ինչպէս այդ ցուց է տրած պ. Միրովի յօդւածի մէջ, —բաց որ պ. Վելիչկօն վկասակար ուշլութիւնը ընդհանուր առմամբ լաւ գծւած է, —այդ անուրանալի է.

Մի ՀԱՅԵԱՅՔԻ «ՆՈՒ-ԴԱՐ» ԼՐԱԳՐՈՒՄ, Ցիշեալ թերթի № 17-ում կարդում ենք պատկերը.

Ակօթի զիւլից մի նամակ կարդացի. «Պետրոսիան» սոսորագրութեամբ, ուր նկարագրած էին կօթի զիւլի վաշխառուներն, անպէս, ինչպէս կան. և պ. խմբագրի կարծիքով, այդ Պետրոսիանի նման ոչ ոք չի զրել զիւլական կեանքից.

Ալլեր կումից ալլ դիսակ թուամներին ալն ժամանակ նշանակութիւն կը բանք, երբ նամակագիրը մատնացուց արած կը լինի ճշութեամբ այն միջոցները, որոնցով կարելի էր վերացնել գիւղերի վախառութիւնը, մինչդեռ նամակագիրն ալլապիսի բան չի արել, և չըգիտենք ինչի մէջ է ալլ դիսակ նկարագրութեաս նշանակութիւնը:

Երբ ալլ տուերը զրալ պ. Ազապեանք պիւր կումից ալլ ժեսակո լոդւածներին նշանակութիւն չի դալիս, — զուցէ ալլ հաճամանքը կարենութիւն ներկաւացնում է Նոր-Դար'ի համար, բաց կարու հեք սմեր կումից ասել պ. Աշապեանին, որ իւր ալլ վերաբերմունքը դէպի Մուրճի հրատարակած ուսումնասիրութիւնը կարեկցութեան պէս մի զգացմրւնք է արթնեցնուր դէպի ալլապիսի լարարարութիւն անուլը — Կոթի զիւղը ուսումնասիրւած էր Մուրճի մէջ ոչ ալլ զիւղի կարենութեան պաֆճառով, ալլ որովհետ մնը ցանկացած ձեռով զիւղական հանգամանքներ լանձն առնուլ մի հասկացու երիտասարդ եւաւ, որը ինքը կոթեցի էր, և մենք նոյն ալլ ծրագրով զիւղական ցաւեր ուսումնասիրելը կառաջարկեինք ուրիշներին ես. ու սիրով կը բենէինք ալլ ձև ուսումնասիրութիւններ ալլ հրատարակութիւնների մէջ, ապացուց, — մենք նոյն խնկ արտադրութիւնը Մուրճում, երբ Մշակ'ի մէջ մէկը մեր լանձնարարած մեթօդով մի փոքրիկ ուսումնասիրութիւն հրատարակեց Ախալքալակի գոււառի վաշխառութեան մասին, թէե մեթօդը ախնոել, Մշակ'ում, խարօրէն չէր պահպանւած: — Եւ միան վաշխառութիւնը չէր ուսումնասիրւած Կոթի զիւղի նկարմամբ, ալլ և տէրունական ուուրքն ու հասարակական ծախքերը, դուրս բերելու համար թէ մեր զիւղը ինչ և որքան հասարակական ծախքը ունի, նաև տէրունական հարկից դուրս, մի ալլ անդամ առաջ էին բերւած վաշխառութեան մասին փաքքեր, մի երրորդ անգամ՝ անշափահանների ամուսնութեան դէպքերը և Փաքքեր ամուսնական կեանքից, ալլ և Փաքքեր գուութիւնների մասին: Ալլ ամենի մէջ նորութիւնը, մնր զրականութեան մէջ չեղածը ան էր, որ չշափւած խնդիրները ուսումնասիրւած են ախնոել ֆաքքորէն, դէպքերը առաջ են բերւած լոիւ և լականէ լանւնէ, խոլս ուալով ընդհանուր ֆրազներից: Մենք պնդում ենք որ ալլ ուսումնասիրութիւնը թունում է ընթերցողի վրաէ մի փապաւութիւն, որի սուերի հետ անգամ չեն կարող համեմարւել ընդհանուր ֆրազներով զիւղի մասին մեր թերթերի մէջ լոյս դիսած դրւածքները և սոցա թ. ում նաև պ. Ազապեանինը, օրինակ Նոր-Դար'ի հէնց ալս դարւաւէ լունւարի, Նօ-ներում, թէե պարտաւոր եւք զգում խիութիւնը խոսրովանել որ պ. Աշապեանի ալլ մասին ներկայում տպւող լոդւածներին մենք ալնու ամենալին հեղիսում ենք լարգան:

քով և հետաքրքրութեամբ։ Բայց ամօթ չէ, որ ալպան ուարի գիշական կեաճը զեպով ու լոդածներով պարկերացնելուց լեռով, աւար պ. Պետրոսեանի կառարած եղակի ուսումնասիրութեան Դիմաց պ. Ագապեանը կանգնում ու լայրարարում է թէ զգիրենք ինչի մէջ է այդ ժնասակ նկարագրութեան նշանակութիւնը...»

ՄԵԼԱԿ'Ը ԵՒ ՀԱԿԱՍՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԴԺՈՒԹՎԸ, ԽԵՐ ԸՆԴԱՐՁԱԿ ՅՈՒԱԾ, ՊՐԱՊՐ-
ՄՈՎԹԻՒՆՆԵՐԻ ԴԻՄԱԳ, ՈՐՄՆԳՈՎ ԱԷՍՔԱՆ ՊԱՐԻՆԵՐ ԿԵՐԱԿՐԵԼ է Մշակ'Ը
Մուրձի հաշով, Նա երբ Մուրձ'ում մի էջ նկարողութիւն է գոնում իւր
նկարմամբ։ այդ նա ուզում է հրապարակի վրա ծախսել իր անունդ։
Մուրձ'ին, Եւ ինչքան էլ լու փշում է, որ եղաւ մի ամիս, երբ մենք
Մշակ'ով «Հըմնեցինք»! Նա ուրախ էր դորանից, և այդ պատճառով
նա իրեն արդէն ազար էր համարում գալրադուի ինսինուացիանե-
րով պարապել։ Սական իսկութիւնը սա է, որ մենք միան դառն
պարուաւորութիւններ ենք կառարել Մշակ'ի նկարմամբ։ մենք չենք
կարու վեասակար բաները առանց ոշադրութեան թողնել։

Մեր անցեալ ամուսի երկու էջ նկարողութիւնները Մշակ'ի մասին
աչդ թերթը վերցրել ու համեմագի է Ախալքալակի աղէտի մասին մեր
դրածի քանակութեան հետ բեսէք, աւէտի մասին երկու էջ, Մշակ'ի
մասին՝ «որքան կամենաք», որ ասել է թէ դարձեալ երկու էջ։ Ան-
շուշտ Մշակ'Ը, Ախալքալակի անոնը փշելով, կամհցել է ընթերցող-
ների աչքի առաջը շնել Մշակ'ում ուրագութիւնների եր-
կար ցանկը, Բայց նւէրներ «ընդունել» ալլ բան է, և ալլ բան հրա-
պարակախօսութիւն անել ու զրական լաւ գործ կառարել։ Ամենա-
վեասակար թերթը նոյն իսկ կարող է նւէրներ ընդունելու ընդու-
նակութիւններ ունենալ ։ Եւ երբ պ. Վելիչկո՞ն լոկ իւր սեփական
հեղինակութեամբ կարողացաւ 14-15 հազար ոռորդի ոչ միան «ըն-
դունել» ալլ և հաւաքել Ռուսասրանի սովետների օգորին, այդ բնաւ
չեկաւ որքան և ինէ բարձրացնելու իրեն ու իւր խմբագրած թերթի
անոնը։ Նա մնաց նոյն վնասուկարը իւր հրապարակախօսական դե-
րով, ինչ որ էր մինչն այդ նւէրներ հաւաքելը։ և նոյն Վելիչկո՞ն
նոյն իսկ Ախալքալակի համար 2000 սուրբուց աւելի էր հաւաքել
մինչն «կաւկազ» թերթից հեռացւելու օշը, երբ Մշակ' դեռ ևս
միան իւր հարիւներիցն էր խօսում։»

Դալ ուրեմն ու ժողովրդական ալէտների անուններն էլ մէջ
որել զցել զուտ հրապարակախօսական վիճաբանութիւնների ժամա-
նակ, — այդ միան սրոր վարմունք է, և չենք կարծում թէ Մշակ'ի
այդ վիճաբանական էթիկան իրեն աւելի օգորակար լինի, քան ինչ
օգուզ ունեց պ. Վելիչկոի հրապարակախօսական համբաւին սսրա
շարունակական քիս-քիս անելը հաւելի վրայ...»

Նւ ինչի էր հարկաւոր Մշակ'ին ալդ մանեղվը? Նրբ թէ դա պարասիսան էր մեր աշն մերկացումին, որ կատարեցինք իրար հանդէպ Դնելով Մշակ'ի երէկւայ խաղացած զերը Գուլամիրեանցին արատաւորելու համար և նոյն Մշակ'ի այսօր։ Կոկորդիլոսեան արցունքները նոյն Գուլամիրեանցի մահան առիթավ։

Մշակ'ը մեզ պատասխանում է թէ իւր երէկւայ գրածի ու այսօրւայ զրածի մէջ հակասութիւն ջկայ։

Ինչպէս թէ հակասութիւն չըկաէ, քանի որ դուք երէկ գալուարարում էիք Արարու հանդէսը իրը — «մեռած արտադրութիւն» իսկ Գուլամիրեանցին իրեն, իրը մէկը, որը հրատարակում էր Արաքս'ը — (լաւ կարդացեք!)-

«Ոյր փառասիրութեան, իսլրագրի, հրատարակչի անւան տակ ծարպիկ կերպով ծրիակերութիւն, մուրացկանութիւն անելու համար» (ուստ Մշակ, 1896 Նո 221 և դրանից քաշւածք Սուրբ 1899 թ. Նո 11-ը, էջ 1500-1501)։

Մինչդեռ ալժմ, Գուլամիրեանցի մահը Դուք ուրում էք, լալուարաբելով ալդ մահը իրը — Բողոք հասարակութեան անտարբերութեանը ղէմ։ (ուստ Մշակ 1899 Նո 221)։

Էլ դրանից աւելի հակասական ինչ կարու է լինել աշխարհքիս երեսին, Բայց ումն էք ասում. մի թերթի, որը նախ իսկ Ախալքալակի ժողովրդական աշխատից ալսօր մի ռեկլամ է շինուամ...

Բաւական չէ ալդ. Ալսօր ալդ նոյն թերթը (Նո 12), մեզ պատասխանելով և մի կերպ ուզելով գլուխը ծածկել, պնդում է թէ իւր երեք տարի առաջ բարձի մէջ (որ սական Գուլամիրեանցին էր վերաբերում) Մշակը իրը թէ միան գլարձակւել էր մեծապարիւ մուրացկանների վրայու։

Եւ Դուրս է գալիս, որ նա, ում մահը, Մշակի ալժմեան կարծիքով —

«Բողոք է հասարակութեան անփարբերութեան դէմն ալդ անձը եղել է ուրեմն ոչ ալլ ինչ, բայց եթէ մի մեծապարիւ մուրացկան»։

Բաւական չէր, ուրեմն, մի հակասութիւն, Մշակ'ը ալսօր, իրեն մեր մորակից ազատելու համար, ընկնում է մի երկրորդ դժոխավին հակասութեան մէջ, դարձեալ մի նոր արագ կպցնելով իւր իսկ առշբացեալնո... Իրը թէ Գուլամիրեանցը, Արաքս'ի հրատարակիչը մեծապարիւ մուրացկանի տիպար եղած լինէր...»

Եւ ինչ կը կարծէր տաշանդաւոր երգիծաբան Պարոնեանը, որ իւր «մեծապարիւ մուրացկան» խօսքը պիտի անպիտանների բերանով շպրուէր ախպիսի աշխարհաւոր անձերի վրայ, որոնց բոլոր

թշւառութիւնը կալացած է եւել Մշակ'ի պաշտած մամոնան մոռացած լինելու և անշահ գործին նվիրւած լինելու մէջ, ինչպիսի մի օրինակ էլ Գուլամիրեանցն է ներկալացրել իւր Արաքս'ով.

Նեմեղիդա՞ն թէն ամեն օր գալիս է պարժելու ձեզ, բայց այդ պարմի սոսկումը դուք կը զգաք աճ, ժամանակ, երբ շար ուշ կը լինի... նոյն իսկ զլջալը...

ՏԳԵՂ ԳՐԱԿԱՆ ԵԲԵՒԽՅԹԻ Ընթերցողները, ներկալ համարի «Նոր սրացւած գրքերուի շարքում կը կարդան նաև «Մ. Շովիեան.—Ճակերը մարդաբանական և աշխարհագրական տեսակետից» Արդարադաշտ Արարարար ամսագրից. Վաղարշապատ, Պատ. Մ. + Աթ. Ս. Էջմիածնի, 1899։ Աւս պիտի նշանակէր թէ Մ. Շովիեան գրել է մի աշխարհութիւն լիշտակ խորագրով. այնուէս չի, եւ սակաւն, Մ. Շովիեանին սեփականը միմիան գրքի գրքուիի երկու էջ նկատողութիւնն է, որի մէջ նա բարուում է թէ այդ աշխարհութիւնը թարգմանութիւն է Ա. Պետրովուրգի գիտութեանց ճեմարանի պրոֆ. Դ. Ն. Անուշինից» մի չօդւածի, որ բաւած է Գր. Զանշահանի հրադարակած սուսերէն «Յշերարական օգնութիւն Տաճկանակերինո լաբորնի ժողովածուի մէջ, Դրական էթիկաի գրացմունքից կատարելապէս զուրկ պիտի լինի մէկը, որը մի բան թարգմանելով իւր անունը դնում է հեղինակի անւան տեղ. Կէս դար գրական կեանք ունենալուց լնուի պէտք էր կարծել որ աշդպիսի երեսութիւնը ոգեղութիւնը ամենքին պիտի հասկանալի դառած լինէր. Եւ յեռ «Շովիեանուը մի փոքր ծանօթ անուններից է մեր մամուլի մէջ. Զըինի թէ մեղքը Էջմիածնի բաղարանինն է,

Ֆէթվաճենի ՊԱՏԵՔԵՐԱՀԱՆԴԻՍՈՒԾ, թէ Փլիսի զինուրական-պարմական թանգարանի սրահներից մէկում պ. Ֆէթվաճեանը ի ցուց էր դրել իւր իւշաներկ և ջրաներկ (աքւարէլ) նկարները. Պատկերահանդէսը, որ պարունակում է մինչև կիսուն նկար, ընդհանրապէս շափ նպաստաւոր բակաւորութիւն է անում. Նկարչի տաղանդը կաւանում է մանաւանդ իրերի դեկորացիական մասին, օրինակ զգեստներին, ընական գոխներ ուալու մէջ, նկարների մէջ առանձնապէս աշքի են ընինում նոքա, որոնք ներկալացնում են Սուլթան Մահմուդի դամբարանը, թրքուհին մզկիթը մոնելիս, Ախալցխափի կինը, թրքաց պլոտը Փոքր-Ասիակում, մերկ մուրացկան ծերունին, գիւղական հայ քահանան Ս. Գիրքը կարդալիս. Կաւ նկարների մէջ նաև մի ֆրէսկօ: Պր. Ֆէթվաճեանը որապիզուցի է, ուսած Կ. Պոլսի կալարական գեղարվեստից դպրոցում և ասվա Հռոմում ու Վիեննայում Վերջին ուարիները նա գործում է գլխաւորապէս Ս. Պետրովուրգի ի ցուց դրած նկարները վերջին ուասնեակ ուարիներից են և ներկալացնում

են արդիւմքը այն ժամերի, որ նա կարողացել է գնագեսել պատ-
քըներով բանւած զրաւմունքների միջոցին.

ՀՆԴԿԱՍՏԱՆՈՒՄ ՍՊՎ.Ը. Ներկայ քարտաչ լունւարից սկսել է սովոր Հընդ-
կաստանում, որի նմանը եղաւ 1897-ի սկզբներում Անբերրութիւնը
լառաջացել է 1899-ի աշունքւալ սովորական անձրեների բացա-
կալութիւնից, իսկ ձմեռւալ անձրեները լունւարի կէսին եղան, երբ
արդէն ուշ էր Բոմբէլի, Շաջագուտանի և կենսարութական նահանգների
համար. Հնդկական կառավարութիւնը հաշւել է որ սովոր գառապուշ-
երկրի բարածութիւնն է 150 հազար անգլ. քառակուսի մլոն անգ-
լիական նահանգներում, և 400 հազար քառ. մլոն բնիկների պետու-
թիւններում. Վնասւած ժողովուրդը արդ գոելերում 19 միլիոն հոգի
է, որից 22 միլիոնը անգլիական հողերում, 2^o միլիոնը բնիկների
պետութիւններում. Անգլիական կառավարութիւնը սովարանջներին
օգնում է միմիայն վարձագրութ աշխարութիւն գալով. ներկայ լուն-
արին այդ աշխատողների թիւը հասաւ 3.563.000-ի (1897-ին նոյն
ժամանակ բոցա թիւն էր 2.026.000). Բացի այդ, Հնդկաստանի
գանձարանը նրամական փոխարութիւն է առում բնիկների պետու-
թիւններին, որոնք չեն կարող դրամ ճարել կարողների թիւը աճե-
լու է մինչև լունիսը. Հնդկաստանի գանձարանին, որպէս ենթա-
դրում է կառավարութիւնը, մինչև 1 ապրիլ (նոր գոմար) սովեալ-
ներին օգնելը նստելու է 30—40 միլիոն ռուփի (=2—2,₄₄ միլիոն
ֆունո սուբրինգ=20—26 միլիոն ռուբլի). Բանուլ և կաթնագու
անասունը, որպէս նախագետներում է, աւելի է կոտորւելու քան
առաջները նման դէպքերում, ալնայս որ մասնաւոր սովորագրու-
թեամբ հաւաքւող զումարները գլխաւորագոյն պիտի դնան զիւշա-
ցիների օգնութեան բաւար գնելու լունդոնի լորդ-մէրը (քայլաքա-
զլուխ) սովորագրութիւն է բացարել սովեալների օդուին:

ՖԻՆԱՆՆԻԱԼԻ

Դեկտ. 6-ին Հելսինգֆորսում, զլխաւոր շտաբի գնդապետ Զէլի,
զօրաց զլխաւոր հրամանագարի և ամբողջ դեղական գարնիզուի
առջեն հալորդութիւն արաւ Ֆինլանդիայում կարարած զինւորական
ռեֆորմի մասին. Նա պարզեց Բարձրագոյն առաջարկների մէջ ու, չ-
մից արած պահանջները և սենագրի և զիմսուալին պաշտօնեաների
եղրակացութիւնները, առանց շօշափելու խնդրի բարաքական կողմը.

—Ելիկրի բնդէանուր-նահանգապետ զեն, Բորբիկով Կրասնոե-Ահ-
լուսում նորան ողջունող ֆինլանդացիներին ասաց Յիշեցէք, որ Ֆին-
լանդիան մասն է մեծ մայր-Ռուսօսիայի, նորա հեռ լաւիքեան կապ-
ւած, Խիստ կարարելով տեղական օրէնքները և կարգերը, ոչ ոք չլ-
խանդարում միաժամ լինել որպով ուսու.

—Նոր բարւանից Հելսինգֆորտամ սկսեց հրաժարակել կառավարչական թերթ ռուսերէն լեզով։

—Հելսինգֆորսի հիւրանոցների տէրերն մերժել են բնակարան և սնունդ բայց մօտ իջևանել ցանկացողներից ոմանց, որի պատճառով ընդհանուր-նահանգապետ գէն։ Բորբիկով առաջարկել է Հելսինգֆորսի նահանգապետին վերտանել ոստիկանական կանոնները և սոցա-համաձանեցնել ներկայիս պահանջների հետ։

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ ԵՒ ՌՈՒՍԻԱ։ Պարսից կառավարութիւնը 22%, միլիոն ռուբլու փոխառութիւն է արել թեհրածի Ռուսական փոխարու բանկակից արև պայմանով որ եթէ պարսից կառավարութիւնը կարողանալու չլինի փոխառութեան գումարի դարեկան դոկուները և շինուցման մասը վճարել՝ ապա պարսկական մաքսադների վրա պիտի կարարվի հսկողութիւն Ռուսիայի կողմից և ալդ մաքսադների եկամուգներով ապահովէի պարտքի կանոնաւոր վճարումը։ Փոխառութիւնը կնքւած է 40 տարով։ Կարծում է որ Ենցել-Արասի մաքսադունը չի մրնում հաշվի մէջ։ Փոխառութիւնը, իւր ունենալիք քաղաքական հետեւանքների համար, նկատում է որպէս քալաքական խոշոր աքտ և ռուսաց դիւանագիրութեան չաշողութիւն, նամանաւանդ, որ պայմանների մէջ կատ և ալս, որ մինչև պարտքը վճարուի պարսից կառավարութիւնը իրաւունք չունի որ և է ալ պետութիւնից փոխառութիւն անել։

ՖՐԱՆՍԻԱ ԵՒ ՌՈՒՍԻԱ։ Նոր. 24-ին ֆրանսիական զրահակիր «Վումա» ծովապեր Ֆուրնիէի հետ՝ 25-ին հասաւ Սեասուպուր Ֆուրնիէին ներկաչացան հախ ռուսաց շրաբի պեր ծովապեր կուզմիչ և ալդ իշխանաւոր անձեր, ապա Ֆուրնիէն ափ իջաւ և ալցելութիւն արաւ զլիսաւոր կոմանդիրին՝ Տըլլուովիին։

ՖՐԱՆՍԻԱ.

—Ֆրանսիական մինիստրական խորհուրդը դեկտ. 17 (29)-ին որոշեց երկրի և գաղութների պաշտպանութեան համար ծախսել 120 միլիոն ֆրանկ, $2\frac{1}{2}$ տարում աւարտելով գործը, ծախսը ծածկելով սովորական բիշչէից։

Արտաքին առուտուրը 1899 թւին, մաքսադն վարչութեան պաշտօնական տեղեկութիւնների համաձայն, եղած է հետեւալը։ Ներմուծում՝ 4.217.150.000 ֆրանկի, արտածութիւն՝ 3.899.142.000 ֆրանկի։ միամին՝ 8 միլիարդ 116 միլիոն ֆր։ Համեմադութեամբ՝ 1898 թւականի հետ, ներմուծումը 1899-ին 255 միլիոն ֆրանկ պակաս է եղած, արտածութիւնը՝ 389 միլիոն ֆրանկ աւելի։

Ուրեմն 1899 թւին ներմուծում և արտածութիւն միասին կազմում են 8 միլիարդ 116 միլիոն 292 հազար ֆրանկ։ Դեռ ևս 25.

քարի առաջ 1876-ին Ֆրանսիակի արտաքին առություրը կազմում էր 9 միլիարդ 456 միլիոն Ֆրանկ, իսկ սպեցիալ առություրը՝ 7 միլիարդ 564 միլիոն ֆրանկ։ Զգիտենք թէ 1899-ի համար հեռագրի հաղորդածը ընդհանուր թէ սպեցիալ առություրին է վերաբերում 9.456 միլիոնից իջել է 8.116 միլիոնի, իսկ եթէ սպեցիալ առություրին է վերաբերում՝ այս քառորդ դարում 7.564 միլիոնից բարձրացել է 9.456 միլիոնի, ասինքն մօդ 2 միլիարդ ֆրանկի աւելացել է նորա արտաքին առություրը։

—Գեղանէլը նոր քարեշրջանի համար նորից ընդունեց նախագահ սպառդամանոների ժողովի 308 ձայնով ընդդէմ թրիսոնին դըրած 221 ձայնի։

—Յունևարին կարարեցին սենատի անդամների մը երրորդ թւի ընդութիւնը՝ Հանրապետակաները գրեթէ միակ լաջողութիւն ունեցան, բայց ընդունեց նաև զեն. Մերսիէն, որը աչնքան փիուր դեր կարարեց Դրէքուսի դորձի մէջ։

—Ետուալվարութիւնը դատի կանչեց Ալսումպիոն) կրօնական ընկերութիւնը, որը, աշխատների միաբանութեան դիմակով դիզել է անբաւ հարստութիւն, հարստարակում է թերթեր (որոնց մէջ զլիսաւորը La Croix) և ամեն կերպ հարստաճարում է միամիտների բարեկարգութիւնը՝ Ընկերութիւնը հանաչեց մեւառու և դատապարտութիւնը 16 ֆրանկ բուգանքի, և Ընկերութեան զործունէութիւնը արգելեց Դէպքը շատ խօսել ուեց իւր վրաք. կառավարութիւնը դատի ենթարկելով ասումպիոնինսիսերին՝ կամեցաւ նոցա գաղտնի արարքները երեան հանել—և նպատակին հասաւ։

Թիթիթիլլ, Սուլթանի վեսալ Մահմուդ-փաշա իւր երկու որդիկերանցով գրագիրով և հարապարակախօս Խոնի-Դանիչի հետ փախաւ և. Պոլսից, ըստ ոմանց՝ իր պատկանութ Նրիփասարդ-Թիւրքիաի կուսակցութեան, ըստ ալոց՝ իրին անաջու միջնորդ անզլիացոց Փինանսիունների Բաղդադի երկաթուղարին գծի նկատմամբ։ Մահմուդը երկու որդիների հետ դեկտ. 9(21)-ին Մարտէլ հասաւ շոքենաւով։

—Եու. 14-ին ձերքակալւեցին պերտական խորհրդի իրաւագիրական բաժնի նախագահ Սահիդ-բէ, պետ. խորհրդի քաղաքացիական բաժնի անդամ Ֆէրդի-բէ, և չէլիս ուլ խալամի խորհրդի անդամ մոլլւա Զիա, նոքա ուարւեցան Խլիզ-քէօչկ, դատւեցան արտակարգ դատարանում, որ կազմել էին զինւ. մինխագրը, արգաքին գործ. մինխագրը, ումբաձիգների գրումէլստերը, պետ. խորհրդի նախագահը և չէլիս ուլ խալամը, և դատապարտւեցան աքսորի. Ըստ ումանց՝ դատապարտածները բանակցութեան մէջ են եւած սուլթանի մեծ որ-

Դու հետ, որին սուլթանը չի սիրում, ըստ ուրիշների՝ գահաժառանդ Ռէշտի հետ, նպարակ ունենալով սուլթանին գահավէժ անել, ԳԵՐՄԱՆԻԱ.

Արտաքին առուտուրը 1860 թւականից դէմ բարձրացել է $2\frac{1}{2}$ միլիարդից $8\frac{1}{2}$ միլիարդ մարկի (ուրեմն $10\frac{1}{2}$ միլիարդ ֆրանկից աւելի). Ազադիսով ուրեմն աչժմ Գերմանիան իւր արոտաքին առուտուրով (Ներմուծութիւնը և արոտածութիւնը միասին) Ֆրանսիայից անց է կացել և համաշխարհացին շուկայում Անգլիակից փորու բըռնում է երկրորդ տեղը.

ԻՐԱՆԻԱՆԻԱՅԻ երկու կուսակցութիւնը միանալով՝ պարագլուխ ընտրեցին Զոն Ռէդմոնդին: Վերջինս կոչ արաւ իրանդական ազգին, չայրնելով որ բուրերի դէմ մշտող պարերազմի ձախողութիւնները լար մար առիթ են բալիս իրանդական պարգամաւորներին սովորելու ալլ կուսակցութիւններին որ իրանդիացին շնորհւի ինքն ավարութիւն, լուծւի հողացին խնդիրը և ազն:

ԱՆԳԼԻԱ: Համանցների ժողովը բացւեց գահական ճառով, որին ի պարասիան բրւելիք ուղերձին Ֆիցմորիսը առաջարկեց չայտնել ոժգոհութիւն կառավարութիւնից՝ Հարաւ-Աքրիկայի պարերազմի առիթով, որ անգան անպարաստ՝ Անգլիան կու չարուցեց և պարտութիւն ներ կրեց: Մի քանի օր վիճաբանելուց չետոք ժողովը 352 ճանով ընդունվել 139-ի մերժեց Ֆիցմորիսի առաջարկը:

ԶԻՆԱՍՏԱՆ: Արի կայսրուհին, որը իւր ձեռքն է առել ամբողջ կառավարութիւնը, հեռացրել է երիտասարդ կայսրին և տորա տեղ կամքը է հրատարակել իւր ազգականներից մի անշափահասին: Կայսրուհին վճռական կերպով ռէակցիա է սկսել՝ ամեն երոպական մոքերի դէմ, հրամանելով որ պետական ծառակալութիւն մրնուները կրթւած լինեն հին գրականութեամբ՝ Կոնֆուցիոսի ուշլութեամբ, Հրաման է տրւած երկու վերանորոգիչներին մեծ գարձառութեամբ կառավարութեանն իանձնել կամ կենդանի կամ սպանւած,

† ՄԻԱՍՎՈՎՍԿԻՅ, Աւգուստ, պրոֆեսոր քաղաքա ոնդրեսութեան Լավցիկի, համալսարանում, վախճ. նոյ. 9-ին.:

† ԾԵՐԵԹԵԼԻ, Գէորգի Եֆիմովիչ, վրացի հրապարակախօս և հասարակական գործիչ (Հըշտիմովիչ, բարձր բանաստեղծ իշխ. Ակակի Ծերեթելու հետ), կարելի է ասել որ զիլաւուր ներկաւացուցիչն էր վիրա-հակական համերաշխութեան, որ նա քարոզում էր զրչով և գործուի, Երբ, օրինակ, 1897-ի քաղաքացին ընդունութիւններին վրացիք, Վելիչկօի ու իշխ. ձաւաւաձէի քարոզածին համեմատ՝ առաջին ընտրութիւններին Հընտրեթելով, ալլ ևս չըկամմացան քէշարկել, աչպիսով ցոյց անելով հակարի դէմ, Գէորգի Ծերեթելին չհեռացեց իւր ազգայիններին, Հանգուցեալը վրաց պարբերական մամուլի հիմնադիրներիցն է:

Ծնեց 1842-ին Քութալիսի Նարանդի Շորտաղան գաւառի Գորիս գիւղում։ 1863-ին Պետքերը ուրպի համալսարանի բնագիտական բաժինը աւարտելուց լեռու եկաւ հալրենիք, հիմնեց Դրուերա լուսագիրը։ Ժինը վահաց մինչև 1865-ը, յանձնելով այն Ս. Մհամբիին։ Ինքը սկսեց որը վահաց մինչև 1865-ը, յանձնելով այն Ս. Մհամբիին։ Ինքը սկսեց հրատարակել «Գիւղական լրագիրը», ապա Կրեթուլի ամուսիքի որը շուրջով ապա ուրիշներին յանձնեց։ 1893-ին իւր ամեւսնու անունով հրատարակելով կւալի թերթի զիսաւոր աշխատակիցն ու ուշաւթիւն ուսուն եղաւ թաշմանը ներկալ էր մեծ բազմութիւն և երեք դիմաք զարդարւած էլն Հարիւրաւոր պասկներով։

ՆՈՐ ԱՏԱՑԻԱԾ ԳՐԲԵՐ

(Ուր թական չկայ—Ներկայ տարւանն է)

- 1) ՏԵՐ-ՄԻՒՐԱՔԵԱՆՅ, Յովի։—Գեռահասների ազար ընթերցանութիւնը։ 190 յանձնարարելի և մերժելի գրքերի ցուցակով։ Արդարագուած Մուրճ ամսագրից, Թիֆլիս, տպ. Տ. Խօսինեանցի, 60 կոպէկ։
- 2) ՇԱՆԹ։—Գերասանուհին, (վէպ)։ Արդարագուած Մուրճ ամսագրից, Թիֆլիս, տպ. Տ. Խօսինեանցի, 40 կոպէկ։
- 3) ԹԱՂՖՈՍԵԱՆՅ Քրիստոփորի Բանասորելծութիւնները։ Հեղինակի պարկերով, և կենսագր, ակնարկով։ Հրատարակութիւն Գոլթնիւ 1899. Մոսկաւ, տպ. Ք. Բարխուդարեանցի, 20 կոպէկ։
- 4) ՇԱՎԻՐԵԱՆ (?) Մ.՝ Հակերը մարդարանական և աշխարհագրական գիսաւելուցից, Արդարագուած Արարատ ամսագրից, 1899. Վաղարշապատ, տպ. Մ. Ա. Ա. Էջմիածնի։
- 5) ՏԵՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆ, Ղազարոս։—Շէլի Զաւար. (Աղարկեր քրյական կեանքից, Նմանութիւն), Թիֆլ., տպ. Ա. Մարտիրոսեանցի, Ալբիւր Տարագի հրատարակութիւն։ Թիֆլիս, 1899. զի՞ն ?
- 6) ՏԱՂԱԻԱՐԵԱՆ, Դոքտ. Ն.՝ Բառացուցակ ախտանւանց ու դելորէից լարկութեանց ֆրանսերներ ի հար Ա. Պոլիս, տպ. Կ. Մարթէռսեան, 5 Դրուշ։
- 7) ԹՈՒՄԱՆԵԱՆՅ, Յարութիւն.՝ Մելիք-Բեղլար (պատմական պոէմա)։ Թիֆլ., տպ. Վ. Բարագ Հրատ. Ընկ., 10 կոպէկ։
- 8) ՏՈԼԱՏՈՅ, Լեւ.՝ Մանկութիւն և Պատմանեկութիւն, Թարգմ. Պ. Պ. Հ. Հրատ. Թ. Հ. Հ. Ընկ., Թիֆլ., տպ. Մ. Մարտիրոսեան, 1 ռուբլի։
- 9) ԲՈՒԴՈՒՂԵԱՆ, Ա., բժիշկ.՝ Ինչ է անառակութիւնը, Ս. Պետերբուրգ, տպագություն, «Տրուդ» ընկ., 5 կոպէկ։
- 10) ՅՈՒՐԻ.՝ Փառանձեմ կոմեդիա չորս արարւածով և վեց պարկերով։ Թիֆլ. 1899. տպ. Ա. Վարդանեանց. 1 ռուբլի։
- 11) ԵԶԵԳԼՈՎ.՝ ից փոխադր. Սարդարեան-Արեւշարեան, Ադամ.՝ Գոքուր

- թաթռու, կառակ-վոդքւիլ 1 արարւածով, Թիֆլիս, 1900թ. տպար.
Տ. Ռօբեանցի. 20 կոպէկ.
- 12) (ԳՐԻՄՄԻՅ) — Եօթը ազուաւ հեքիաթ: (Պատկերազարդ): Հրատ. Թ.
Հ. Հր. Ընկ.: — Թիֆլ., տպ. 40 կոպ..
- 13) ԹԱՏՐՈՆ, գրական և թափերական հանդէս, 3-րդ տարւաէ (1899թ.)
№ 2. Հրատ. Ալ. Թարխանեանց: Թիֆլ., տպ. Կ. Մարտիրոսեանցի:
Տարեկան 2 գրքի գինն է 3 ռ..
- 14) ПАНТИХОВЪ, И. И. д-ръ—Щаорская котловина и ея окрестности. (Общій взглядъ. Природа. Люди. заключеніе). Тифлісъ,
тип. К. Казловск. #40 կոպէկ.
- 15) ТОТ ՅՈՒԱՆՑЪ, В.—Мощъ коопераці. С. Петерб., тип. Ско-
роходова, 20 կոպ..
- 16) BASMADJIAN, M. K. J.—Une nouvelle inscription arméniaque ou
vannique.
- 17) ՆՈՅՆՅ. — Une nouvelle inscription byzantine.
- 18) ԿՄԻԿԻԱՆ, Մ.—Армянскій календарь 1900 г. Тифл., типогр.
Козловск. 20 կոպէկ.

ՄՈՒՐՃ'Ի ՊԱԽՍԱՐԿԴ:

Պարսկաստանի բաժանորդներին լայտնում ենք, որ արտօնութեան
Մուրճ'ի №-ները իրենց լրկւելու են՝ ապահովցրած բանդը ըստներովի
Դորար համար Մուրճ'ի խմբագրութիւնը չի պահանջում լաւելւածա-
կան վճար (որ ամեն բաժանորդից կանչը է ռ. — 1 ռ. 20 կոպ.):
Իսկ եղած առաջարկներից՝ լաւելւածական վճար սրանալ՝ մենք հրա-
ժարւում ենք: Որովհետեւ, վերջ ի վերջուի, խմբագրութիւնն է պար-
տական բաժանորդներին թերթը ոչ միան լրկել, այլ և ոել հասց-
նել: Անցած 1899 թւականին Պարսկաստանի բաժանորդներից մենք
սուցել ենք շատ գանգարներ աշդ մասին: Երեխ պարսկական պոստը
հասել է ծալրակել անկարգութեան:

Վ. ԹԻՓԱԿՆԵՐԻ: Մուրճ' 1899 թ. № 11—12, Գրախօսականի մէջ, էջ 1471,
երկու սիւնակների վերջին տողերը պիտի ջնջել և դոցա ոելը դնել
բաց մնացած տողեր, այն է, ձախ սիւնակի վերջին տողը պիտի լի-
նի՝ «աէնքան կաշկանդել է բոցնին, որ նա մէկ որդի ունենալով»
և ազն, իսկ աջ սիւնակի վերջին տողի տեղ դնել՝ «աէնքան կաշ-
կանդել է բոցնին, որ նա մէկ որդի ունենալով» և ազն: